

ԱՊՐԻԼ 2023

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



Երևան 2023

<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>3</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	4
1.1.1. Ջրահեռացման համակարգ .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում .....	6
1.3. Ջրահեռացման համակարգ .....	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	8
1.5. Էներգահամակարգ .....	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	9
<b>2. Առևտրային տնօրինություն</b> .....	<b>10</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	11
2.2. Հասույթ .....	11
2.3. Գանձում .....	12
2.4. Դեֆիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ .....	13
2.5. Ջրաչափեր .....	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	15
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>16</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	20
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....	23
3.6. 1-85 թեժ գիծ .....	24
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>26</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....	<b>29</b>
5.1. Դասընթացներ/սեմինարներ .....	30
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	31
5.3. Համագործակցություն ՀՀ ՆԳ Նախարարության հետ .....	32
5.4 ԱՊՄ-ների ձեռք բերման գործընթացի կազմակերպում .....	32
<b>6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>33</b>
6.1. Համակարգչային ցանց .....	34
6.2. Ինտերակտիվ համակարգ .....	34

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական, ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

### Արմավիրի մարզ

● «Արմավիր» տեղամաս. Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի Բաղրամյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներին զուգահեռ աշխատակիցների կողմից՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ սեփական ուժերով ծրագրի շրջանակներում,  $d=50$ մմ,  $L=342$ զմ վթարային վիճակում գտնվող պողպատե ջրագիծը փոխարինվել է  $d=90$ մմ,  $L=342$ զմ պլեյ խողովակով: Ընդհանուր թվով 28 բաժանորդի ջրաչափական դիտահորերից 26 դիտահոր դուրս է բերվել բաժանորդների սեփականություն հանդիսացող տարածքներից (մեր կողմից տեղադրվել են նոր դիտահորեր): Վթարային վիճակում գտնվող բոլոր մետաղական մուտքագծերը փոխարինվել են մետաղապլաստե խողովակներով: Թվով 28 ջրաչափից 10-ը փոխարինվել 1 նոր ջրաչափերով, իսկ թվով 18-ը՝ վերատեղադրվել: Ջրագծի փոխարինման արդյունքում տնտեսվել է մոտ  $0,5 \div 1,0$  լ/վ ջրաքանակ:



● «Էջմիածին» ենթատեղամաս. Արմավիրի մարզի, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 2-րդ թաղամասի թուջե  $d=200$ մմ խողովակը կառուցվել է 1960-1970-ական թվականներին, որն անցնում է բնակիչների կողմից սեփականաշնորհված տարածքներով և գտնվում է վթարային վիճակում: Հաճախակի առաջացող գաղտնի վթարների հետևանքով ցանցում եղել է ճնշման անկում և ջրամատակարարման խաթարում: Խնդրի կարգավորման նպատակով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ սեփական ուժերով ծրագրի շրջանակներում, ենթատեղամասի աշխատակիցների կողմից վերակառուցվել է  $d=160$ մմ  $L=400$ զմ ջրագիծ, տեղադրվել է թվով 15 ջրաչափական դիտահոր: Ջրափական սարքերը տեղափոխվել են սահմանազատման կետեր, որի արդյունքում տնտեսվել է մոտ 5լ/վ ջրաքանակ և ջրամատակարարման համակարգում նախկին 0,5մթն ճնշման փոխարեն ունեցել ենք 1,8-2 մթն ճնշում:



### Արարատի մարզ

● «Մասիս» տեղամաս. Արարատի մարզի Մասիս քաղաքի N33 և N34 բազմաբնակարան շենքերը սնող մետաղական  $d=76-100$ մմ ջրագիծը կառուցվել էր 1980-ական թվականներին և գտնվում էր քայքայված վթարային վիճակում: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ սեփական ուժերով ծրագրի շրջանակներում աշխատակիցների կողմից կառուցվել է պլեյ  $d=90$ մմ  $L=720$ զմ ջրագիծ, տեղադրվել է թվով 7 ջրաչափական դիտահոր, թվով 7  $d=15$ մմ ջրաչափեր, թվով 1 է/բ դիտահոր: Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է մոտ 3լ/վ ջրաքանակ, բարելավվել է ք.Մասիս, N33 և N34 բազմաբնակարան շենքերին մատակարարվող խմելու ջրի քանակը և որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, վերացվել են գաղտնի վթարները և ապօրինի միացումները:





## Գեղարքունիքի մարզ

● «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են ջրագծի վերակառուցման աշխատանքներ ք.Սևան, Շինարարներ 2 հասցեում (d=63մմ, L=87գծմ), ինչպես նաև Չկալովկա համայնքի տարածքում՝ d=500մմ Սևան-Գավառ ջրատարի վրա, կատարվել են վթարավերականգնողական աշխատանքներ, որի արդյունքում տնտեսվել է 6 լ/վ ջրաքանակ:



● «Գավառ» տեղամաս. Գեղարքունիքի մարզի գ.Նորատուս, Սարալանջի 1-ին նրբանցքի ջրագիծը կառուցվել էր 1980-ական թվականներին և գտնվում էր քայքայված վթարային վիճակում: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ սեփական ուժերով ծրագրի շրջանակներում աշխատակիցների կողմից կառուցվել է d=63մմ L=426 գծմ ջրագիծ:

Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է մոտ 2լ/վ ջրաքանակ, բարելավվել է գ.Նորատուս, Սարալանջի 1-ին նրբանցքի բաժանորդներին մատակարարվող խմելու ջրի քանակը և որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, վերացվել են գաղտնի վթարները և ապօրինի միացումները:

## Սյունիքի մարզ


● «Միսիան» տեղամաս. Միսիան քաղաքի Շիրվանգաղե փողոցի d=100-200մմ մետաղական ջրագիծն անցնում էր սեփական տնատիրությունների տարածքներով և առկա վթարների վերացումը դարձ էլ գրեթե անհնարին: Ջրակորուստները, ապօրինությունները կանխելու նպատակով աշխատակիցների կողմից կառուցվել է նոր d=63մմ պեթ L=212գծմ ջրագիծ:

Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է մոտ 5լ/վ ջրաքանակ, բարելավվել է մատակարարվող խմելու ջրի քանակը և որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, վերացվել են գաղտնի վթարները և ապօրինի միացումները:



### 1.1.1. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● «Հարավ» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Շարուրի փողոց 2/1 հասցեում գտնվող d=250մմ կերամիկական կոյուղագիծը տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է նոր d=200մմ L=15գծմ երկշերտ ծալքավոր պեթ խողովակով:



## Մյունիքի մարզ

«Միսիան» տեղամաս. Միսիան քաղաքի Որոտան և Խանջյան փողոցների կողեկտորն անցնում էր Միսիան քաղաքի մարզադաշտի հարևանությամբ և ավելի քան 20 տարի գտնվել է խցանված վիճակում: Աշխատակիցների կողմից փոխարինվել և տեղադրվել են նոր  $d=250$ մմ  $L=132$ զմ երկշերտ ծալքավոր խողովակներ:

Կատարված աշխատանքների արդյունքում վերացել են կոյուղատար համակարգի վրա հաճախակի առաջացող խցանումները, հարևանությամբ առաջացող կոյուղաջրերի լճակները և գարշահոտությունը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրահեռացումը:



Ապրիլ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1911
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	60740
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	41120
Հոսակորուստի որոնում կորեյաստորով	մ	13910
Ջրաչափական հանգույցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	57
Շահագործումից հանված ջրագիծ	մ	187
Կառուցված ջրագիծ	մ	9134.5
Կառուցված կոյուղագիծ	մ	464
Վերացված գաղտնի վթարներ	հատ	14
Փոխարինված փական	հատ	57
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	266
Մաքրված դիտահոր	հատ	1152
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	13.3
<b>Վերացված վթարներ</b>	<b>Չափման միավոր</b>	<b>Քանակ</b>
Ջրամատակարարման ցանցում	հատ	863
Ջրահեռացման ցանցում	հատ	1206
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Ապրիլ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	708	888	1019

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է ապրիլ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամաչափ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	198	9	0	0	0	2	1	0	1	0	211
Փոխարինված	261	30	21	0	7	14	14	2	3	0	352
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	169	10	1	0	6	2	3	1	1	0	193
Ընդամենը	628	49	22	0	13	18	18	3	5	0	756

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 756 ջրաչափ: Կատարված աշխատանքների 83 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ՋՐԱՇԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ապրիլ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	0	220	120
2	Քանաքեռ-Զեյթուն	0	250	120
3	Մաշտոց	0	266	0
4	Շահումյան	0	190	6
5	Շիրակ	1021	388	0
6	Արթիկ	60	93	0
7	Ապարան	0	47	46
8	Ալավերդի	1910	21	6
9	Աշոցք	0	4	0
10	Բերդ	60	15	0
11	Իջևան	0	44	0
12	Լոռի	0	179	8
13	Նոյեմբերյան	0	16	0
14	Սպիտակ	0	15	0
15	Ստեփանավան	915	3	30
16	Թալին	0	5	0
17	Տաշիր	0	8	0
18	Չարենցավան	0	80	0
19	Աբովյան	0	107	6
20	Հրազդան	0	90	0
21	Կենտրոն	300	236	0
22	Հյուսիս	100	242	30
23	Էրեբունի	60	171	6
24	Հարավ	120	327	22
25	Արմավիր	0	107	0
26	Արտաշատ	0	88	0
27	Էջմիածին	0	144	0
28	Աշտարակ	2970	35	6
29	Արարատ	0	47	30
30	Մասիս	0	52	1
31	Գավառ	0	14	0
32	Սևան	0	74	0
33	Մարտունի	0	20	0
34	Վարդենիս	0	8	0
35	Ճամբարակ	0	16	0
36	Դիլիջան	30	40	12
37	Վայք	0	18	0
38	Եղեգնաձոր	0	9	12
39	Ջերմուկ	0	39	0
40	Սիսիան	0	40	132
41	Գորիս	0	30	3
42	Կապան	0	83	17
43	Մեղրի	0	31	0
	Ընդամենը	7546	3912	613

### 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանում շարքից դուրս էր եկել Wilo մակնիշի պոմպերից մեկի առանցքակալը, որը փոխարինվեց նորով և այժմ պոմպն աշխատում է բնականոն ընթացքով: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք ապամոնտաժվեցին և մաքրվեցին:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում գտնվող կեղտաջրերի պոմպակայանում կատարվեցին պոմպերի զննման աշխատանքներ, որի արդյունքում պոմպերը դուրս բերվեցին ջրից, զննվեցին պոմպերի հերմետիկությունը, յուղի քանակությունը և առանցքակալների վիճակը: Խցանվել էր նաև մաքրման կայանի մանր մասնիկների տեղափոխման կոնվեյերը, որն էլ ապամոնտաժվեց և մաքրվեց: Ինչպես նաև կարգաբերվեց մանր ճաղավանդակի քերիչ սանրը, որը աշխատանքի ընթացքում խախտվել էր:



- Երևանի կեղտաջրերի մաքրման կայանում շարքից դուրս էր եկել ճաղավանդակի քերիչ սանրի շղթան, որն էլ փոխարինվեց և այժմ աշխատում է բնականոն ընթացքով: Կատարվել են նաև ռոտոգման ցանցի բարելավման աշխատանքներ, որի արդյունքում փոխարինվել են խողովակների քայքայված հատվածներ:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	66.275	21.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	52.108	23.4
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	158.366	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	98.351	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	121.821	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	19.794	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	10.274	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	10.150	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	23.100	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

### 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 376 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 249 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

h/h	Կատարած աշխատանք	Քանակ
1	պոմպի վերաթողարկում	5
2	պոմպի մոնտաժում	2
3	պոմպի զննում էլ. սարքերի կարգաբերում	18
4	պոմպի ապամոնտաժում տեղափոխում վերանորոգման	2
5	պոմպերի վերանորոգում	1
6	պոմպերի ինվերտորների զննում	2
7	պոմպերի զննում կարգավորում	55
8	պոմպերի զննում արտաքին փականի տեղադրում	1
9	պոմպերի զննում	1
10	պոմպակայանի զննում տանիքը զննված է	1
11	նոր պ/կ զննում	13
12	չափիչ սարքի տեղադրում	1



h/h	Կատարած աշխատանք	Քանակ
13	այրված շարժիչի փոխարինում	1
14	անսարք պոմպի ապամոնտաժում և տեղափոխում վերանորոգման	1
15	արհեստանոցի էլ. սնուցման մոնտաժման աշխատանքի	1
16	բաժանիչի մոնտաժում, մալուխի վերականգնում	1
17	գնում արմուկ պոմպից	1
18	գնում գոտիչի մաքրում	1
19	գնում նորմալ	12
20	գնում փուչիկը ծակ	1
21	գոտիչի մաքրում	20
22	գոտիչի մաքրում, ճնշման կարգավորում	2
23	գոտիչի մաքրում, փականը ենթակա է փոխարինման	1
24	էլ. լարերի կարգավորում	2
25	էլ. մալուխը փասաված է	1
26	էլ. մալուխի գնում, ենթակա է փոխարինման	1
27	էլ. մալուխի մոնտաժում	1
28	էլ. մալուխի փոխարինում	1
29	էլ. սարքերի գնում	2
30	էլ. փականի էլ. լարի գնում	1
31	էլ. սարքերի գնում կարգավորում	2
32	էլ. փականի էլ. սնուցման մալուխի փոխարինում	1
33	էլ. փականի մալուխի մոնտաժում	1
34	էլ. փականի շարժիչի փոխարինում	1
35	թողարկիչի փոխարինում	1
36	ինվերտորի վերաթողարկում	1
37	էլ մագնիսական հոսքաչափի հոսանքի կարգավորում	3
38	հետադարձ փականի փոխարինում	1
39	հոսանքազրկված է ՀԷՑ կողմից	3
40	հոսանքի բացակայություն, վերականգնվել է	1
41	հոսանքի գնում	2
42	հոսքաչափի էլ. մալուխի մոնտաժում	1
43	հոսքաչափի էլ. սարքերի գնում	1
44	ճնշման կարգավորում	4
45	մուտքի ջրի պակասություն	1
46	մուտքի փականի փոխարինում	1
47	ներքին փականի տեղադրում	6
48	պոմպի վերաթողարկում, թողարկիչները փոխելու ենթակա են	1
49	պոմպի վերանորոգում	5
50	էլ սարքերի փոխարինում	7
51	պոմպերի խձուձում	15
52	ջերմային անջատիչը անջատված	1
53	ջրազրկվել է ներքին ցանցի կողմից վթարավերականգնողական աշխատանքների համար	30
54	սնուցող մալուխը փասաված էր, փոխարինվել է նորով	1
55	սնուցող մալուխի փոխարինում, ավտոմատ անջատիչի տեղադրում	1
56	վերանորոգված պոմպի մոնտաժում	1
57	վթարված ինվերտորի փոխարինում	1
58	ցածր ճնշման ռելեի կարգավորում	2

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Ապրիլ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենա-մեխանիզմների պատշաճ շահագործման ապրիլ ամսվա ընթացքում եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 2 մեքենա-մեխանիզմի վրա: Փոխարինվել են թվով 33 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և գոտիչներ: Թվով 2 մեքենա-մեխանիզմի անվադողեր փոխարինվել և հավասարակշռվել են: Թվով 6 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ





## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.05.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 599,018 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. Ապրիլ ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	666,246	571,373	85,8
	Իրավաբանական անձ	31,680	27,646	87,3

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	742,088	591,946	79,8
	Իրավաբանական անձ	37,048	25,788	69,6

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 442 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Ապրիլ ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4797 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 04.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2138	1596	291	4025
	Իրավաբանական անձ	518	202	52	772
	Ընդամենը	2656	1798	343	4797

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ ապրիլ ամսին փոխարինված 4797 ջրաչափերի մոտ 44 %-ը (կամ 2141 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 282,491 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



### 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Ապրիլ ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,339 մլն. դրամ (99 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Ապրիլ ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 218 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 34.2 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.05.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հատույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	10,451	2,571
Բնակիչ-բաժանորդներ	7,541	1,814
Իրավաբանական անձեր	2,910	757

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 332.1 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



## 2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.05.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում:

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	711,645	590,720	83.01	35,984	25,778	71.646
	Առանց ջրաչափի	30,443	1,226	4.03	1,064	10	0.94

Տվյալների բազայում 01.05.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով:

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	883,123	392,022	44.39	39,726	9,545	24.03

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6075 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1052 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

### ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2438	1998	81.9
գ.Պոռչյան	1668	1139	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5973	1919	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 14613, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 14297, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 3423, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 4702, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2441, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3596 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 6128 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	514	226,256	42,193,765

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ






### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ






Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի ապրիլ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.8%, ինչը 0.3 % նվազ է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 57 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2023թ-ի ապրիլ ամսին 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 142 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը ավելացել է 22 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 1713 կՎտ.ժ (0,38%), այն դեպքում, երբ նորակառույց շենքերի 14 պոմպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 14 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 5470 կՎտ.ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կլիներ 7183 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



#### Երևան քաղաքի բակային պոմպեր

Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել է 146 էլ. հաշվիչ: Փոխարինվել են «Կարմիր Աղեգ» քլորակայանի, «Սևան գրասենյակ» վարչական շենքի, «Լեռնագոգ» պ/կ-ի առևտրային էլ. հաշվիչները: Կարգաբերվել է «Լճաշեն» պ/կ-ի էլ. հաշվիչը: Ստուգվել է ընդունվող նոր պոմպակայանի (Տիտոգրադյան 1/2) համապատասխանելիությունը:

Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ:

Էլեկտրաէներգետիկական մեծախախ շուկայում ընդհանուր առևտրի արդյունքում տնտեսվել է 30,742,081 ՀՀ դրամ, որից ԿՈՒՊ (Կարգավորվող ուղիղ բաղադրիչ) բաղադրիչի առևտրի արդյունքում 7,560,085 ՀՀ դրամ, իսկ ՕԱՇ (Օր առաջ շուկա) բաղադրիչում առևտրի արդյունքում 1,161,957 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

#### Պոմպակայանների ուսուսնասիրություն

Թվով 30 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսուսնասիրություններ, որոնց արդյունքում 24 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 376 բակային պոմպակայանում կատարվել են ուսուսնասիրություններ, որոնց արդյունքում թվով 249 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

#### Ինվերտորների տեղադրում

Տեղադրված ընդհանուր 78 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 4145 կՎտ.ժ՝ 4%:




**Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ**

● Հաշվետու ժամանակահատվածում 47 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

**Երևան քաղաքի՝ «Վեդլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան**


● 2023թ. ապրիլ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 13 075 կՎտ/ժամ (1,04%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա*



● Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 141 213 ԿՎտ/ժ/ամիս կամ 7,80 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա*



**«Վեդլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան**

● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 205 304 ԿՎտ/ժամ կամ 4,81 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*«Վեդլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան*



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Երևանի քաղաքի ՃԿՓ-ների տվյալների բազայի թարմացում, բոլորի համար ավելացվել են մուտքի և ելքի ճնշումների արժեքները	քաղաք	1
Լուկաշին թաղամասի ներտնային միացումների մուտքագրում ԱՏՀ՝ շինարարական բաժնի կողմից տրամադրված տվյալների հիման վրա (70 միացում)	միացում	70
Կենտրոն տեղամասի 1-ին գոտու ջրաքանակների չափման կետերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ԱՏՀ	գոտի	1
Տոպոլոգիայի արդյունքում հայտնաբերված սխալների ուղղում	հատ	1032
ԱՏ համակարգ է անցկացվել, թվայնացվել, վերանայվել հետևյալ համայնքների ջրագծերը	հատ	2
Արզնի 1 և 2 ջրատարների հետագծի ուղղում, նշվել են սողանքների և քարաթափման հատվածները	ջրատար	2
Հիդրավիկ մոդելավորման համար կատարվում է Երևան քաղաքի Արաբկիր համայնքի, Արարատի մարզի ջրի բաշխիչ համակարգերի թարմացում	մոդելավորում	2
153 տեխնիկական պայմանների, 26 սխեմաների թվայնացում	տեխպայման	153
Կառուցված ջրագծերի երկարություն	մետր	1052.6
Շահագործումից հանված ջրագծերի երկարություն	մետր	239.1
Տեղադրված կամ փոխարինված փականների քանակ	հատ	49
«Ինտերակտիվ» համակարգում բաժանորդ կետերի ուղղում	կետ	937
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	43
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	728
Տեղադրված կամ փոխարինված փականներ	փական	20
ԱՏՀ-ում Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2548
ԱՏՀ-ում Մարգարյին ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9391
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1795
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1815

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք ապրիլ ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

● Նախորդ ամիս Արզական-Քանաքեռ ջրատարի կանգառից, տվյալ ջրատարի Գետամեջ գյուղում գտնվող ջրթող փականը ժառանգել էր, որի արդյունքում ունեցել ենք 20լ/վ հոսակորուստ: Արտահոսքը կանխելու նպատակով տեղադրվեց երկրորդ d=250մմ փականը: Աշխատանքը կատարվեց «Ք և ԽՁՄԿ» ծառայության աշխատակիցների ուժերով:



● Արզնի 1 «Կորեայի ձոր» հատվածում էլ. ցանցի կողմից՝ շինարարական աշխատանքերով պայմանավորված, ժառանգել էր d=900մմ թուջե ջրատարը, որի արդյունքում ունեցել ենք մոտ 50լ/վ կորուստ: Կատարվեցին համապատասխան միջոցառումներ ջրատարում ճնշումը նվազեցնելու ուղղությամբ: Վթարը վերացվեց «Արաբկիր» ՇՏ-ի ուժերով:

● Կատարվել են նաև ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:





## Գոտիավորման աշխատանքներ

### Գյուղ Թորոս

● «Աշոցք» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրվեց Թորոս գյուղում առկա  $D=100$ մ թուջե ջրագիծը: Ուսումնասիրության արդյունքում, չափման և որոնողական աշխատանքների արդյունքում պարզվեց, որ այն ունի 2 լ/վ հոսք և չի սպասարկում ոչ մի բաժանորդի, ուստի այն որոշվեց խցափակել: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվեց  $D=100$ մ  $L=50$ մ թուջե ջրագիծ: Տնտեսվել է մոտ  $Q = 2$ լ/վ ջրաքանակ:



● Չկալովկա գյուղի մոտակայքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Հացառատ-Լճաշեն  $D = 500$ մ պողպատե ջրատարի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 6$ լ/վ ջրաքանակ:

### Գանձակ գյուղ


● Բաղրամյան փողոցով իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար  $D=110$ մ պե ջրագծի վրա: «Գավառ» ՇՏ կողմից վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 5$ լ/վ ջրաքանակ:




● Հենրիկ Աբրահամյան փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար  $D = 100$ մ պողպատե ջրագծի վրա: «Գավառ» ՇՏ կողմից վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 5,5$ լ/վ ջրաքանակ:

### Քաղաք Վարդենիս

● Վարդենիս «Շատջրեք» ջրաղբյուրից դեպի «Սոթքի» պ/կ գնացող  $D= 200$  մ պողպատե ջրագծի վրա կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 3 վթար: Վթարները վերացնելուց հետո ընդհանուր տնտեսվեց  $Q = 6$ լ/վ ջրաքանակ:







● «Աշտարակ» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Ագարակի պոմպակայանի մոտև  $D = 300$ մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել է վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 10$ լ/վ ջրաքանակ:


## Քաղաք Երևան

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Գլինկա փողոցի 2ա շենքի դիմացով անցնող  $D = 300$ մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 6$ լ/վ ջրաքանակ:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Խոբենացի 3-րդ փակուղի 114 տան մոտով անցնող  $D = 20$ մմ պողպատե ջրագծի վրա: Ջրագիծը խցափակելուց հետո տնտեսվեց  $Q = 1$ լ/վ ջրաքանակ:

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Աբովյան 26 շենքի բակում գտնվող նախկին պոմպակայանի միջով անցնող  $D = 100$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 1$ լ/վ ջրաքանակ:



● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Ավան թաղամասի Հարսնաքար ռեստորանի միացումից առաջ  $D = 80$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 5$ լ/վ ջրաքանակ:

● «Արաբկիր» տեղամասի Լամպեր տրանզիտ գոտու ծախսը բարձրացել էր  $80$ լ/վ-ով: «Արաբկիր» ՇՏ աշխատակիցների հետ իրականացրած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Արդուրյան 40 շենքի մոտով անցնող  $D = 400$ մմ պողպատե ջրագծի վրա: Ջրագիծը խցափակելուց հետո կանխվեց  $Q = 80$ լ/վ ջրակորուստը:





### 3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ ամսվա ընթացքում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ՀՀ Սյունիքի մարզի «Չանախչի», «Գեղի», «Զվար» և «Ագարակ» խմելու ջրի մաքրման կայանների քլորակայաններում հեղուկ քլորի ծախսի մասին ճշգրիտ տեղեկություն ստանալու համար տեղադրվել են 3 տոննա կրողունակությամբ առցանց տեղեկատվություն հաղորդող կշեռքներ: Կշեռքները տեղադրելու համար նախապես կատարվել են ստորև ներկայացված խիստ անհրաժեշտ միջոցառումները.

● «Զվար» ՋՄԿ-ի մուտքի մետաղական դուռը ձևափոխվել է և բերվել է ստանդարտ չափերի, որպեսզի ամբարձիչը առանց դժվարությունների և անվտանգ կերպով կարողանա քլորի տարան տեղադրել կշեռքի վրա:



● «Ագարակ» ՋՄԿ-ի մուտքի մետաղապլաստե դուռը փոխարինվել է համեմատաբար մեծ չափեր ունեցող մետաղական դռով, որպեսզի առանց դժվարությունների ամբարձիչը անվտանգ կերպով քլորակայանում կարողանա կատարել քլորի բեռնման և բեռնաթափման աշխատանքներ:

● ՀՀ Սյունիքի մարզի «Չանախչի» խմելու ջրի մաքրման կայանի օրվա հերթափոխի սենյակում իրականացվել են նորոգման աշխատանքներ, մասնավորապես


- ▶ Փտած փայտե պատուհանները փոխարինվել են մետաղապլաստե պատուհաններով
- ▶ Առաստաղի ծածկի սալի տակ կառուցվել է գիպսակարտոնե առաստաղ,
- ▶ Էլեկտրական մալուխները և սարքավորումները փոխարինվել են նորերով,
- ▶ Համապատասխան շինարարական նյութերի միջոցով հարդարվել է սենյակի ամբողջ մակերեսը (հատակ, պատեր և առաստաղ):



● Քաղաք Արմավիրի «Արմավիր» քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խցանված վակուում կարգավորիչը հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Գառնիի «Գառնի» քլորակայանում հեղուկ քլորի տրման միացման ժառանգած հատվածը վերանորոգվել և քլորակայանի ներսում բաժանարար հանգույցի շարքից դուրս եկած Aldos փականը փոխարինվել է վերանորոգված փականով հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Կապանի «Գեղի» մ/կ-ում հեղուկ քլորի համակարգի արդեն իսկ հնամաշ և շարքից դուրս եկած սարքավորումները ապամոնտաժվել և մոնտաժվել են, որն էլ ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



● Քաղաք Իջևանի «Գետափնյա» քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հիպոքլորիդի հաբի համակարգի տրման քայքայված գծերը փոխարինվել և մոնտաժվել են, իզիֆլո սարքի վրայի խափանված փականը փոխարինվել է նոր փականով:



● Քաղաք Սևանի «Լճաշեն» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի հնամաշ գծերի գազ քլորի տրման խողովակները փոխարինվել են: Ջրի տրման պոմպը ապամոնտաժվել և մոնտաժվել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Արմավիրի «Մեծամոր» քլորակայանում հեղուկ քլորի համակարգը խցանված վակուում կարգավորիչը վերանորոգվել է հեղուկ քլոր համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:




● Քաղաք Գորիսի «Մուխութուրյան» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով մոնտաժվել է հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած փականը:



● Քաղաք Ստեփանվանի «Նովոսելցովո» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի կոնտեյնների խափանված անցումը փոխարինվել է նորով, որն էլ կապահովի հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:

● Քաղաք Սիսիանի «Շաքե» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը և դոզատորը փոխարինվել են նոր վերանորոգված սարքերով:



● Քաղաք Դիլիջանի «Ֆրոլովո» մ/կ-ում հեղուկ քլորի համակարգի խցանված վակուում կարգավորիչը վերանորոգվել է հեղուկ քլոր համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:




### 3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 32730 զանգ:

● Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 10769 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 8159 զանգ (75,8%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2610 զանգ (24,2%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 21961 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 15533 զանգ (70,7%), իսկ մարզերինը՝ 6428 զանգ (29,3%):



- 2022թ. ապրիլ ամսվա համեմատ՝ 2023թ. ապրիլ ամսին 0,66 %-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 12,03%-ով:
- 2022թ. ապրիլի համեմատ՝ 2023թ. մարտ ամսին 3%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 24%-ով ավելացել է 5 րոպեից ավել զանգերի քանակը և 13%-ով ավելացել է հայտարարությունների լսումն ավտոմատ ծառայության միջոցով:
- 2022թ. ապրիլի համեմատ՝ 2023թ. ապրիլ ամսին ամսին 16,93%-ով նվազել է ջրամատակարարման բողոքները:



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2022 Ապրիլ	2023 Ապրիլ	
<b>Առևտրային</b>	Ընդամենը	<b>10698</b>	<b>10769</b>	0.66%
	Երևան	<b>8470</b>	8159	-3.67%
	Մարզեր	<b>2228</b>	2610	17.15%
<b>Շահագործում</b>	Շահագործում	24963	21961	-12.03%
	Երևան	17626	15533	-11.87%
	Արարկիյր	2857	2400	-16.00%
	Քանաքեռ-Զեյթուն	2057	1270	-38.26%
	Մաշտոց	3204	3569	11.39%
	Շահումյան	2318	1570	-32.27%
	Շենգավիթ	1815	1988	9.53%
	Կենտրոն	2664	2378	-10.74%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	1521	1356	-10.85%
	Էրեբունի	1190	1002	-15.80%
	Այդ թվում կոյուղու վթար	49	160	226.53%
	Այդ թվում դիտահորի խցանում	4600	4479	-2.63%
	<b>ՄԱՐԶԵՐ</b>	<b>7337</b>	<b>6428</b>	<b>-12.39%</b>
	Հարավ	3833	3943	2.87%
	Հյուսիս	3504	2485	-29.08%
	Այդ թվում կոյուղու վթար	49	50	2.04%
	Այդ թվում դիտահորի խցանում	2503	2516	0.52%
		Ընդամենը	<b>35661</b>	<b>32730</b>

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Ապրիլ ամիսը Վեոլիաթիմի համար աշխատանքային առումով բուռն և ընդհանուր առմամբ առանց արտակարգ պատահարների ամիս հանդիսացավ: Ելնելով դրանից էլ՝ Հանրային կապերի ծառայությունը ապահովել է 34 հրապարակում համակարգում բոլոր ուղղություններով ընթացող ջրաշինարարական աշխատանքների մասին:



Շատ կարևոր էր Վանաձորի 60 տոկոսին և հարակից 13 գյուղերը սնող «Նովոսելցովո-Վանաձոր» 58 կմ երկարությամբ մայրուղային ջրատարի վրա իրականացված շինարարական աշխատանքները միաժամանակ 18 վայրում. փոխարինվեցին Հոբարձի, Վարդաբլուր, Կուրթան, Ամրակից գյուղերը սնող ջրագծերի մուտքի փականները, Փամբակ, Վահագնի, Վահագնաձոր գյուղերի ջրագծերի մուտքերի վրա տեղադրվեցին բարձր ճնշման փականներ, որոնք կարևոր են KFW ծրագրի ավարտից հետո ջրամատակարարման հետագա գործընթացը բնականոն ձևով ապահովելու համար:



Մայրուղային ջրատարից անմիջապես սնվող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը տեղափոխվեցին սահմանազատման կետեր, վերացվեցին վթարներ, որոնց արդյունքում տնտեսվեց վայրկյանում մինչև 15 լիտր ջրաքանակ: Հաշվետու ամսում քիչ չէին նոր ջրագծերի կառուցման աշխատանքները ամբողջ հանրապետությունում: Էջմիածնում ընթացող Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրով (ՊԿԱՕ) ջրագծերի կառուցմանը զուգահեռ Վեոլիաթիմը շենքերի մուտքագծերը փուլ առ փուլ սկսեց միացնել փողոցների նորակառույց ջրագծերին: Արդյունքում՝ Մաշտոցի 10, 22 շենքերի վերջին հարկերը ապահովվեցին ինքնահոս եղանակով 17-ժամյա կանոնավոր ջրամատակարարմամբ: Մի ցուցանիշ, ինչպիսին երբևէ չի եղել Էջմիածնի այս հասցեներում: Այս ուղղությամբ աշխատանքները

դեռ շարունակվում են: Նաև «Էջմիածին» շահագործման տեղամասը քաղաքի Արամ Մանուկյան թաղամասի 600 բաժանորդի համար կառուցեց 400 գծամետր պոլիէթիլեն ջրագիծ, 100 մետր ներտնային միացումներ, տեղադրեց 20 դիտահոր:

Նոր ջրագծեր կառուցվեցին Կապանի Դավիթ Բեկի 6, 8, Ռ. Մինասյան 1, 2, 3, 5, 19ա, Ավետիսյան 1, 1ա բազմաբնակարան շենքերի և դրանց հարակից տնտեսվարողների համար: Վեոլիաթիմը Վեդի քաղաքի Կասյան փողոցի, Մասիս քաղաքի 33, 34 շենքերի, Երևանի Կենտրոն վարչական շրջանի մի մասի, Նազարբեկյան թաղամասի մի մասի հին ու քայքայված ջրագծերը փոխարինեց նոր պոլիէթիլեն խողովակաշարով:

Ապրիլ ամսին մեկնարկեց նաև Արմավիրի մարզի Դոդա գյուղը սնուցող 2,6 կմ երկարությամբ ջրատարի փոխարինման աշխատանքները: Ռոտոման առուների տակով անցնող նախկին թուջե և երկաթե խողովակաշարն ամբողջությամբ քայքայված էր, ինչի հետևանքով ջրի ճնշման ավելացման դեպքում ջրագիծը շարունակ վթարվում էր: Ավարտին նախատեսվում է գյուղին մատակարարել վայրկյանում 7 լիտր ջուր՝ 12 լիտրի փոխարեն, որը լիովին բավարար է կանոնավոր ջրամատակարարում ապահովելու համար:

Վեոլիաթիմը պատվով հաղթահարեց նաև Քասախի կիրճում գրանցված արտակարգ պատահարը: Մեծ ժայռաբեկորի ընկնելու հետևանքով Ֆասավել էր «Շոր-շոր» պոմպակայանի կապտաժի ծածկը, որի հետևանքով անձրևաջրերը կարող էին խառնվել խմելու ջրին՝ առաջացնելով պղտորում: Լեռնային բավականին բարդ և վտանգավոր պայմաններում Վեոլիաթիմը երկաթե կոնստրուկցիաներով և մետաղյա թիթեղներով վերականգնեց ծածկը լիարժեք պատրաստելով պոմպակայանը ամռանը դեպի Երևան անհրաժեշտ քանակի ջուր մղելուն:

Ակտիվ կերպով շարունակվեցին վթարավերացման աշխատանքները ամբողջ հանրապետությունում: Գեղարքունիքի մարզում, Եղեգնաձորում, Վայքում, Գետափում, Բերդում, Վանաձորում, Մեղրիում, Ագարակում և Երևանում Վեոլիաթիմի արագ արձագանքման շնորհիվ վերացվեցին տասնյակ ջրագծերի և կոյուղագծերի վթարներ, հին պոմպերը փոխարինեցին նորերով: Շարունակվեցին Օրվա կարգավորիչ ջրամբարների լվացման, մաքրման ու ախտահանման աշխատանքները: Այս ամսին զուգահեռ Վեոլիաթիմը ակտիվորեն մասնակցեց նաև համապետական շաբաթօրյակին՝ մաքրելով ու բարեկարգելով ինժեներական կառույցներն ու վարչական շենքերի տարածքները:

Ապրիլ ամսին քիչ չէին նաև Վեոլիա Թիմի ձեռքբերումները: Մասնավորապես,



Միսիանի Որոտան և Խանջյան փողոցների տարիներ շարունակ խցանվող կոլեկտորի 135 գծամետր վթարված հատված փոխարինելուց հետո Վեոլիա Ջուրը արժանացավ Միսիանի համայնքապետարանի շնորհակալագրին: Եվս մեկ շնորհակալական նամակ ընկերությունը ստացավ Երևանի Արաբկիր վարչական շրջանի «Անի» նորակառույց թաղամասի բնակիչներից օպերատիվ և հետևողական աշխատանքի համար: Թաղամասում, ահագանգի հետքերով, Ջրի որակի լաբորատորիան իրականացրել էր ջրի նմուշառում՝ հաստատելով որ ջրի որակը լիովին համապատասխանում է սանիտարական նորմերին:

Հաշվետու ամսում չեն մոռացվել համապետական տոներն ու հիշարժան իրադարձությունները: Հավուր պատշաճի հիշվել է Հայոց Ցեղասպանության 108 տարելիցը, Մուրբ Հարության տոնը, հրապարակույթներ են եղել ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, ինչպես նաև թափուր աշխատատեղերի մասին:

Ընդ որում հրապարակույթների մի մասը ուղարկվել է նաև հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, Ընկերության Ֆեյսբուքյան էջից բացի տեղադրվել են Veolia.am պաշտոնական կայքում, ինչպես նաև ընկերության Թվիթերյան և ՅուԹուբյան էջերում:





*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*




## 5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

● ՈԱԱ բաժինը (Որակավորման հանձնաժողով), ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02I, հրամանի և հրամանին կից կարգի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի և 254-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև Հայաստանի հանրապետության Տեխնիկական կանոնակարգերի և Արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» 454-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներով, «Որակավորում եռակցողների. Պողպատի եռակցում հալումով ՄԱՍ 1» ստանդարտի պահանջներով, «Երթևեկությունը աշխատավայրում» Վեոլիա Գրուպի բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջներով, Ընկերության Գործառնական տնօրինության և Հյուսիս, Հարավ և Երևան շահագործման տնօրինությունների թվով 52 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 3 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը:


- ▶ «Էլեկտրագազաեռակցման աշխատանքներին ներկայացվող անվտանգության պահանջներ» թեմայով որակավորման դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց,
- ▶ «Երթևեկությունը աշխատավայրում» Վեոլիա Գրուպի բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջները թեմայով դասընթաց:



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

- Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 38 վարչական շենքում, 1 ՕԿՋ-ում և 4 քլորակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:
- ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման

ցանցերում իրականացվող թվով 37 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին արձանագրված թերությունների շտկման նպատակով:

**2023 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների**



**5.3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

● Համաձայն ՀՀ Արմավիրի մարզպետի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, 2023թ-ի ապրիլի 13-ին, Ընկերության «Հարավ» Շահագործման տնօրինության «Էջմիածին» և «Արմավիր» շահագործման տեղամասերը ՈԱԱ.բաժնի համակարգմամբ, մասնակցեցին ՀԱԵԿ-ի վթարի դեպքում «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով Շտաբային ուսումնասիրման քննարկում, որից հետո պատրաստվեց համապատասխան զեկույց և ներկայացվեց Արմավիրի մարզպետին (Ուսումնասիրման ղեկավարին):

**5.4 ԱՊՄ-ՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

● Բաժինը, հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմերի կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հիմք ընդունելով ՀՀ գործող ստանդարտների և Գրուպի ԲՌԿ Ստանդարտների պահանջները մշակել է աշխատողներին տրամադրվող անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՄ-ների Ամառային արտահագուստ, Պաշտպանիչ կոշիկ, Անվտանգության գոտի-պարան, Լուսաանդրադարձնող ժիլետ, Պաշտպանիչ սախավարտ) տեխնիկական մասնագրերը, որոնց հիման վրա Ընկերությունը, նախատեսում է մայիս ամսվա ընթացքում ձեռք բերել վերոգրյալ ԱՊՄ-ները և տրամադրել աշխատողներին:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ





## 6.1. Համակարգչային ցանց

Ապրիլ ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Շարունակվում են տրամադրվել նոր համակարգիչներ, հին համակարգիչները նույնպես վերաբաշխվել են:
- Կատարվել են մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Գրուպի կիբերանվտանգության դեպարտամենտի հետ համատեղ մշակվել է նոր կիբերանվտանգության ուղղված քաղաքականություն կապված Արդյունաբերական կիբերանվտանգությունը բարձրացնելու նպատակով:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Մպասարկվել է մոտավորապես 1600-1830 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 1000 SS աջակցության տոմս:

## 6.2. Ինտերակտիվ համակարգ

Հունվար-փետրվար ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀՕԿՀ և Ջրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:

● Ինտերակտիվ համակարգում կատարվել են փոփոխություններ, կապված Առևտրային տնօրինության և այլ ստորաբաժանումների գործընթացը ավելի ավտոմատիզացնելու հետ

● Առևտրային տնօրինության տեղամասերի տեսուչների վերաբաշխման աշխատանքներ են իրականացվել

● Մշակվել և ներդրվել է նոր բևեային հավելված, ցուցմունքների օֆլայն գրանցման համար:

● Ակտեր

Ինտերակտիվ համակարգի միջոցով ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություններ			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Յյուսիս	2	0.88	0.18
Էրեբունի	8	3.86	0.77
Շենգավիթ	24	5.00	0.94
Կենտրոն	5	1.55	0.31
Արաբկիր	12	6.42	1.30
Մաշտոց	27	13.11	2.38
Շահումյան	7	4.63	0.83
Եղվարդ	30	10.97	1.95
Քանաքեռ-Զեյթուն	5	2.50	0.50
ԱԿԲ	115	52.74	10.33
Լոռի	5	2.76	0.48
Շիրակ	14	11.99	2.15
Արարատ	28	4.43	0.80
Աբովյան	52	29.20	5.27
Հրազդան	10	4.12	0.75
Ալավերդի	1	0.13	0.03
Ապարան	1	0.21	0.04
Արտաշատ	34	6.34	1.11
Գավառ	11	2.21	0.39
Էջմիածին	24	15.46	2.88
Թալին	7	2.02	0.39
Իջևան	6	0.77	0.15
Մասիս	11	4.80	0.86
Մեղրի	2	0.77	0.14
Արմավիր	28	16.43	3.03
Ձերմուկ	1	1.55	0.31
Աշտարակ	6	1.83	0.33
Զարենցավան	6	1.99	0.35
Սիսիան	14	6.96	1.26
Սպիտակ	2	0.61	0.11
Ստեփանավան	5	2.32	0.42
<b>ԸՆԴԱՄԵՆՆԸ</b>	<b>503</b>	<b>218.57</b>	<b>40.76</b>

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)  
 Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

<b>Լաբորատորիա</b>				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	10	3.90	21	1.01
Էրեբունի	11	3.68	30	0.44
Շենգավիթ	6	1.73	76	0.63
Կենտրոն	18	30.68	65	1.00
Արաբկիր	3	15.16	23	0.22
Մաշտոց	20	13.63	47	0.52
Շահումյան	26	20.32	71	20.50
Եղվարդ	6	32.92	25	0.87
Քանաքեռ-Զեյթուն	10	3.52	4	0.12
Լոռի	21	7.55	36	0.26
Շիրակ	40	18.56	53	0.40
Արթիկ	5	3.74	17	0.09
Արարատ	7	1.25	29	0.33
Աբովյան	26	16.70	76	1.03
Հրազդան	22	11.08	28	0.25
Ալավերդի	2	1.03	13	0.08
Աշոցք	6	2.06	4	0.01
Արտաշատ	0	-	16	0.24
Գավառ	3	1.26	40	0.33
Գորիս	4	1.80	10	0.06
Դիլիջան	0	-	4	0.02
Եղեգնաձոր	4	4.44	9	0.05
Էջմիածին	25	15.37	46	0.30
Թալին	1	0.30	5	0.01
Իջևան	7	1.46	4	0.34
Կապան	9	2.32	30	0.37
Ճամբարակ	1	0.06	0	-
Մասիս	9	4.01	25	0.16
Մարտունի	0	-	7	0.17
Մեղրի	1	0.26	12	0.26
Նոյեմբերյան	2	1.03	21	0.15
Արմավիր	16	4.90	78	0.38
Ջերմուկ	2	0.52	7	0.03
Սևան	5	5.09	7	0.04
Վայք	3	1.55	6	0.05
Աշտարակ	4	1.70	22	0.20
Զարենցավան	12	4.90	27	0.20
Սիսիան	1	11.44	21	0.18
Սպիտակ	2	0.26	19	0.12
Ստեփանավան	10	6.96	10	0.02
Տաշիր	0	-	2	0.01
<b>Ընդամենը</b>	<b>360</b>	<b>257.16</b>	<b>1046</b>	<b>31.47</b>



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am